

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՌԱՊՈՐԹ ՊԱՐՍԱՄԻ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Երեկոյեան ժամը 5:30ին Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Համագումարի մասնակցող հոգեւորականները հաւաքուեցան Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ նուիրեալ անդամներէն՝ Տէր եւ Տիկին Ռապըրթ եւ Արփի Պարսամի բնակարանին մէջ: Սրբազան Հայրը առ ի գնահատութիւն անոնց մատուցած երկարամեայ ծառայութիւններուն, սրբապատկեր մը նուիրեց: Հիւրասիրութեան ներկայ էին Թեմական Խորհուրդի Արեւնապետ՝ Իրաւաբան Տիար ԺովէՖ Կանիմեան, Թեմական Խորհուրդի Անդամ եւ Խնամակալութեան Ծրագրի Արեւնապետ՝ Դոկտ. Վահրամ Պիրիճիբ եւ այլ հիւրեր:

Ընկերային ջերմ մթնոլորտի մէջ Առաջնորդ Սրբազան Հօր մասին երախտագիտական արտայայտութիւններ եղան, ինչպէս նաեւ գնահատական խօսքեր Տէր եւ Տիկին Ռապըրթ Պարսամի մասին՝ յարկապէս իրենց Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Արշակ Աւագ Քհնյ. Խաչատրուեանի կողմէ:

Այս հիւրասիրութիւնը նուիրուած էր Թեմիս Խնամակալութեան Ծրագրին: Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Արեւնապետ՝ Բրշ. Տոքթ. Սարգիս Սրկ. Մետրոպեան, որ վերջերս Լոս Անճելըս վերադարձած էր Երուսաղէմ կատարած իր ուխտագնացութենէն, ոգեւորիչ տեղեկութիւններ հաղորդեց եւ յայտարարեց, թէ Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցին 10,000 Տոլար կը նուիրէր ի նպաստ Առաջնորդարանի Խնամակալութեան Ծրագրին, որուն գլխաւոր նպատակն է հոգալ Քահանայութեան Թեկնածուներուն ուսումնական եւ կեցութեան ծախսերը: Ուրախութեամբ կը փափաքինք յայտարարել, թէ Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. Եկեղեցին 25,000 Տոլար նուիրած է ի նպաստ Խնամակալութեան Ծրագրի:

Սրբազան Հայրը իր շնորհակալութիւնները յայտնեց Տոքթ. Մետրոպին՝ Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ կողմէ կատարուած նուէրին համար, ինչպէս նաեւ Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քհնյ. Փեթոյեանին՝ իրենց կատարած նուիրատուութեան համար: Ապա յարուկ շնորհակալութիւն յայտնեց Տէր եւ Տիկին Ռապըրթ Պարսամին, որ հիւրընկալած էր Հոգեւորականաց Դասը: Ներկաները ուրախ սրտով եւ գոհունակութեամբ հրաժեշտ առնելով բաժնուեցան Պարսամ ընտանիքէն: